



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.yasu.am

№ 175 «\_\_28\_\_»\_\_09\_\_2018 թ.

#### Արձանագրություն N 175

#### ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2018թ-ի սեպտեմբերի 28-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 19-ը:

#### Օրակարգ

1. 2018/19թթ. ուս. տարվա ռոտացիայի ցուցանիշների արդյունքների մասին հարցը /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի ընդունելության հարցը /զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
3. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժնի բակալավրիատում ընդունելության քննությունների փոփոխության մասին հարցը /զեկ.՝ պրոֆ. Գ. Քեռյան/:
4. Թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
5. Գիտական աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
6. Ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
7. Ընթացիկ հարցեր:

#### Խորհուրդը որոշեց.

1. 2018-2019թթ. ուս. տարվա ռոտացիայի ցուցանիշների արդյունքներն ընդունելի գիտություն:
2. Ամբիոններին մեկ ամսվա ընթացքում ուսումնասիրել ֆակուլտետում մագիստրատուրայի ընդունելության հետ կապված առկա խնդիրները և առաջարկություններով հանդես գալ մինչև հաջորդ գիտական խորհրդի նիստը:
3. Համապատասխան միջնորդությամբ դիմել ԵՊՀ ղեկավարությանը «Քաղաքագիտություն» մասնագիտությամբ բակալավրիատի ընդունելության երեք քննություններից (հայոց լեզու և գրականություն, հայ ժողովրդի պատմություն, օտար լեզու) երկուսը դարձնել մրցույթային, մեկը ոչ մրցույթային՝ դիմորդին հնարավորություն տալով հայ ժողովրդի պատմություն և օտար լեզու առարկաների միջև կատարել ընտրություն:

4. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.

ա/ Հայ-Ռուսական համալսարանի ասպիրանտ Ի. Քարամյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդիրները ՀՀ քաղաքական կառավարման բարեփոխման համատեքստում»**, ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.թ., դոցենտ Վ. Դավթյանին:

բ/ Հայ-Ռուսական համալսարանի ասպիրանտ Մ. Ազատյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«ԱՄՆ հայկական լոբբին Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական խնդիրների լուծման գործընթացում»**, ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանին:

գ/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Մ. Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Կրոնական գործոնը Իրան-Ադրբեջան փոխհարաբերություններում (քաղաքագիտական վերլուծություն)»** ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանին:

5. Երաշխավորել հրատարակության՝

ա/ Ք.գ.թ. Արուսյակ Ալեքսանյանի **«Նորանկախ երկրների քաղաքական համակարգերի կայունությունն արդիականացման պայմաններում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելոռուս, Ղազախստան, Ուկրաինա, Մոլդովա)»** վերնագրով հոդվածների ժողովածուն:

6. Ջոն Կիրակոսյանի անվան կրթոշակի ներկայացնել միջազգային հարաբերությունների բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Անահիտ Կարենի Ղազարյանին, իսկ Ռուբեն Միրոյանի անվան կրթաթոշակի՝ հանրային կառավարման բաժնի 4-րդ կուրսի ուսանող Անի Մանվելի Ներսիսյանին:

*Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր*

*Գ. Պետրոսյան*

*Գիտական խորհրդի քարտուղար, դոցենտ*

*Ա. Բարայեյյան*

*Իսկականի հետ ճիշտ է՝*